ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

Ի պատասխան Ձեր 08.12.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ «Երևանի Մ. Մխոյանի անվան հ.68 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի N797-Ն որոշմամբ հաստատված՝ սեյսմակայունության տեսակետից առավել վտանգավոր, ինչպես նաև սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկերում:

Հարկ է նշել, որ նշված դպրոցի կառուցումն իրականացվում է ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-Ն որոշման կատարման շրջանակում, որով ներկայացված է նաև տեղեկատվություն՝ հաստատության տեսակի, հզորության, շինարարական աշխատանքների՝ նույն որոշման N 2 հավելվածով հաստատված չափորոշիչների հիման վրա ընտրված միջամտության աստիճանի, ինչպես նաև պատվիրատու մարմնի (տվյալ դեպքում՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ) վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ